ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱԼԹԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Մալթայի Հանրապետության Կառավարությունը (այսուհետև՝ Կողմեր),

ցանկանալով երկու պետությունների միջև հաստատել և զարգացնել բարեկամական հարաբերություններ,

ընդունելով միջմշակութային երկխոսության կարևոր դերը երկկողմ հարաբերություններում,

համոզված լինելով, որ մշակույթի բնագավառում փոխանակումներն ու համագործակցությունը կնպաստեն երկու երկրների մշակույթների և ժողովուրդների առավել լավ ճանաչմանն ու ընկալմանը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կհամագործակցեն մշակույթի բնագավառում՝ սույն Համաձայնագրին, իրենց պետությունների ներքին օրենսդրությանը և միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Հոդված 2

Կողմերը կաջակցեն իրենց երկրների արվեստի և մշակույթի ճանաչմանը փոխադարձ այցելությունների և մշակութային փոխանակման ծրագրերի միջոցով:

Հոդված 3

Կողմերը կնպաստեն պատմության և մշակույթի վերաբերյալ գրքերի, հրապարակումների, մատենագիտական նյութերի և տեսալսողական ռեսուրսների փոխանակմանը, երկու երկրների գրադարանների միջև ուղիղ համագործակցությանը: Կողմերը կաջակցեն նաև իրենց ազգային գրականությունը մյուս Կողմի լեզվով թարգմանելուն:

Հոդված 4

Կողմերը կզարգացնեն համագործակցությունը երաժշտության բնագավառում, կատարողական արվեստի, թատրոնի, օպերայի, բալետի և այլ բնագավառներում:

Հոդված 5

Կողմերը կձգտեն գործընկեր երկրներում կազմակերպել ցուցահանդեսներ՝ իրենց պետությունների գործող օրենսդրության համաձայն:

Հոդված 6

Կողմերը կնպաստեն հայկական և մալթական շահագրգիռ հաստատությունների և կառույցների միջև ուղիղ համագործակցությանը հնագիտության, թանգարանային կառավարման և հուշարձանների կոնսերվացման (ամրակայման), պաշտպանության և պահպանության ոլորտներում: Նման համագործակցության մանրամասները կհամաձայնեցվեն շահագրգիռ հաստատությունների կողմից:

Հոդված 7

1. Կինոարվեստի ոլորտում Կողմերը կաջակցեն արվեստագետների և փորձագետների մասնակցությանը Հայաստանի Հանրապետությունում և Մալթայի Հանրապետությունում կազմակերպվող միջազգային կինոփառատոներին, ֆիլմերի ցուցադրություններին և մշակութային կինոմիջոցառումներին՝ միջոցառումների կազմակերպման կանոնների համաձայն, ինչպես նաև՝ մասնագիտացված հաստատությունների, դպրոցների, ասոցիացիաների և կինոպահոցների միջև ուղիղ համագործակցությանը:

2. Կողմերը կնպաստեն նաև տեսալսողական ոլորտում հայ և մալթացի մասնագետների անմիջական շփումներին:

Հոդված 8

Կողմերը կապահովեն մտավոր սեփականության իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանությունը՝ իրենց պետությունների օրենսդրության և միջազգային այն պայմանագրերի դրույթների համաձայն, որոնց կողմ են հանդիսանում երկու պետությունները:

Հոդված 9

Կողմերը կաջակցեն արվեստի և մշակույթի բնագավառների դասախոսների, մասնագետների, գիտնականների և փորձագետների փոխանակմանը:

Հոդված 10

Սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացված գործունեության արդյունքում առաջացած ծախսերը հոգալու հետ կապված հարցերը կորոշվեն ըստ յուրաքանչյուր դեպքի՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 11

Սույն Համաձայնագրի դրույթները չեն բացառում մշակույթի բնագավառում համագործակցության այլ ձևերի հնարավորությունը, ինչի շուրջ Կողմերը համաձայնության կգան դիվանագիտական ուղիներով:

Հոդված 12

Սույն Համաձայնագրի գործնական կիրառմանն օժանդակելու նպատակով Կողմերը կձևավորեն հայ-մալթական Համատեղ կոմիտե, որտեղ կընդգրկվեն երկու պետությունների իրավասու կազմակերպությունների հավասար թվով ներկայացուցիչներ:

Սույն Համատեղ կոմիտեն կհրավիրվի հաջորդաբար Հայաստանի Հանրապետությունում և Մալթայի Հանրապետությունում՝ դիվանագիտական ուղիներով նախապես որոշված ամսաթվերին:

Հոդված 13

Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և ընդհանուր համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ: Այդ փոփոխություններն ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 15-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 14

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրարկման ընթացքում ծագած ցանկացած վեճ կլուծվի Կողմերի միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 15

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի վերջին ծանուցումն ստանալու օրվանից, որով Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց կտեղեկացնեն դրա ուժի մեջ մտնելու համար իրենց ներպետական իրավական ընթացակարգերի

կատարման մասին, և կգործի հինգ (5) տարի ժամկետով՝ հնգական (5-ական) տարի նոր ժամանակահատվածներով ինքնաբերաբար երկարաձգվելու հնարավորությամբ:

Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելու միջոցով: Այդ դեպքում սույն Համաձայնագրի գործողության դադարեցումն ուժի մեջ է մտնում մյուս Կողմին նախնական գրավոր ծանուցում ուղարկելուց երեք (3) ամիս հետո:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չպետք է ազդի համագործակցության այն միջոցառումների վրա, որոնք ընթացքի մեջ են:

Կատարված է Վիեննա քաղաքում 2017 թվականի դեկտեմբերի 7 ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ընթացքում ծագած տարաձայնությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝

Մալթայի Հանրապետության Կառավարության կողմից՝

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2017թ. դեկտեմբերի 7-ին Վիեննայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մալթայի Հանրապետության կառավարության միջև՝ մշակույթի բնագավառում համագործակցության մասին» Համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող հայերեն բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
իրավաբանական վարչության պետ՝

Սաթենիկ Աբգարյան